«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

IJEVAN BRANCH OF
"YEREVAN STATE UNIVERSITY"
FOUNDATION

STUDENT SCIENTIFIC
SOCIETY

ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 1,
sssysuib@gmail.com, ijevan.ysu.am

1 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 77-13-27-00

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
(2020-2021 թթ. ուստարվա 1-ին կիսամյակ)

ք. Իջևան «26»դեկտեմբերի 2020թ.

Հ/Հ	Միջոցառման բնույթը	Խորագիրը/ Թեման	Անցկացման օրը	Համառոտ նկարագրությունը
1.	Հանդիպում-իրազեկում	Առաջինկուրսեցիների հետ	03.09-05.09	Հանդիպման ընթացքում համառոտ ներկայացվեց ՈւԳԸ նպատակներն ու խնդիրները, ծավալած գործունեությունը, անդամակցության կարգը:
2.	Գիտական ակումբների հիմնում	«Պատմաբանների ակումբ» «Բանասերների ակումբ» «Օտար լեզուների ակումբ»	20.09-07.12	Ակումբների նպատակն է համախմբել նույն հետաքրքրությունն ունեցող ուսանողներին: Պատմաբանների ակումբը բաղկացած է 6 անդամից, բանասերների ակումբը՝ 4 և օտար լեզուների ակումբը (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն)՝ 11 անդամներից: Ակումբների հիմնական գործառույթն է մասնագիտական դասընթացներ, կինոդիտումներ, ստուգողական խաղեր կազմակերպելը: Յուրաքանչյուր ամսվա սկզբին հրապարակվելու է դասացուցակ: Ուսանողները ամրագրելու են իրենց իսկ ցանկացած դասընթացը և մասնակցեն: Դասընթացները կլինեն և՛ առկա, և՛ հեռավար տարբերակով: Ակումբները կօգնեն ուսանողներին մասնագիտական խորհուրդներով: ՈւԳԸ ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերում տեղադրվել է մասնակցության հայտադիմում՝ վերջնաժամկետով: Վերջնաժամկետը լրանալուն պես մասնակիցները հրավիրվել են հարցազրույց-քննարկման, որի արդյունքում ձևավորվել են գիտական ակումբներ և նշանակվել են ակումբի պատասխանատուները:
3.	Գրքի	Օնորե դը	23.09	Քննարկումը վարեց «Հայոց լեզու և

	քննարկում	Բալզակ «Հայր Գորիո»		գրականություն» մասնագիտության 2-րդ կուսի ուսանողուհի Անուշ Խաչատրյանը: Քննարկմանը մասնակցեցին 8 ուսանողներ: Քննարկման ընթացքում ուսանողներին համառոտ ներկայացվեց գիրքը և զուգահեռ ցուցադրվեց համանուն ֆիլմի որոշ դրվագներ:
4.	Հավաքագրում	«Թիկունքը ամուր է»	29.09-18.10	Արցախում ծավալվող պատերազմական իրադրությամբ պայմանավորված՝ մասնաճյուղի ՈւԽ կառույցի հետ միասին կազմակերպվեց անհրաժեշտ իրերի՝ ծխախոտի, չոր սննդի, դեղամիջոցների հավաքագրում: Հավաքագրվածը ուղարկվեց և՛ Արցախի, և՛ Տավուշի առաջնագիծ:
5.	Դասընթաց-սեմինար	«Առաջին բուժօգնություն»	22.11	Դասընթացը վարեց Հայկական Կարմիր Խաչի ընկերության Տավուշի մարզային և մասնաճյուղի Առաջին բուժօգնության բաժնի պատասխանատու, ԱՕ ավագ հրահանգիչ Մարինե Սարիբեկյանը: Դասընթացի շրջանակում ուսանողները սովորեցին մի շարք կարևոր հմտություններ: Մասնակցություն ունեցան բոլոր գործընթացներին և կիրառեցին ստացած գիտելիքները: Դասընթացին մասնակցեցին շուրջ 24 ուսանողներ:
6.	Դասընթաց-սեմինար	«Մեդիագրագիտության»	25.11	Zoom հարթակի միջոցով կայացավ առցանց սեմինար, որին մասնակցեցին շուրջ 25 ուսանողներ: Սեմինարը վարեց «Ֆինանսներ» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի Իրա Վարդանյանը: Դասընթացի շրջանակում ուսանողները իմացան, թե ինչպես տարբերակել կեղծ և հավաստի լուրերը: Սովորեցին մեդիայից ավելի գրագետ օգտվելու սկզբունքները, ապատեղեկատվության տեսակները: Դասընթացի վերջում անցկացվեց խաղ quizizz.com կայքի միջոցով, որի շնորհիվ ուսանողները գործնականում կիրառեցին ստացած գիտելիքները:
7.	Գիտական ակումբների հիմնում	«Մանկավարժների ակումբ» «Տնտեսագետների ակումբ» «Տուրիզմի	28.11-11.12	Այն սկզբունքով, որով բացվել են նախորդ 3 գիտական ակումբները, կազմավորվեցին ևս 3 գիտական ակումբներ: Մանկավարժների ակումբը բաղկացած է 4 անդամից,

		ակումբ»		տնտեսագետների ակումբը՝ 3 և տուրիզմի ակումբը ՝ 7 անդամներից:
8.	Ցուցահանդես-տոնավաճառ	«Հանուն մեր զինվորների»	04.12	Բարեգործական ցուցահանդես-տոնավաճառի նպատակն էր օգնել պատերազմում վիրավորում ստացած զինվորներին: Իրականացվեց հավաքագրում: Վաճառվեցին գրքեր, նկարներ, մրգեր, մուրաբաներ, ձեռքի աշխատանքները և այլն: Հասույթը ՈՒԳԸ նախագահությունը անձամբ փոխանցեց երկու զինվորների՝ յուրաքանչյուրին 100.000 ական դրամ՝ առողջության վերականգնման համար:
9.	Կինոդիտում	«Հետապնդելով երջանկությանը»	05.12	ՈՒԳԸ ֆեյսբուքյան և ինստագրամյան պաշտոնական էջերում նախօրոք տեղադրվեց կինոդիտման հայտադիմումը: Կապված հակահամաճարակային պայմանների հետ տեղերը սահմանափակ էին: Ֆիլմը խոհախրատական բնույթի է և հանդիսատեսի մեծ համակրանքն է վայելել: Կյանքի, մարդկային հարաբերությունների և նպատակներին հասնելու մասին է: Մասնակցեցին 12 ուսանողներ:
10.	Առցանց միջոցառում	«Հայկազեան շաբաթ»	14.12-18.12	ՈՒԳԸ պաշտոնական էջում 5 օր շարունակ տեղադրվեց միայն Հայաստանի ու հայերի մասին մի շարք փաստեր: Նպատակը ուսանողության շրջանակում այս եղանակով տարածել ու խրախուսել հայկականը: Նշված օրերի ընթացքում տեղեկություններ հրապարակվեցին հետևյալ թեմաներով՝ հայկական տարազներ, ավանդույթներ, խոհանոց, ֆիլմեր և եկեղեցիներ: Դրանք մշակվել էին հենց ՈՒԳԸ անդամների կողմից: Կապված եռօրյա սգի հետ տևեց 5 օր:
11.	Սեմինար-զեկուցում	«Սակրավոր» խաղը և «Սոցիալական մեդիայի մարքեթինգը»	16.12	ԻԿՄ 4-րդ կուրսի ուսանող Արայիկ Շահնազարյանը ներկայացրեց հանրահայտ Սակրավոր խաղի իր մշակած տարբերակը: Ներկայացրեց խաղի ստեղծման պատմությունը, տվեց հիմնական տերմինների սահմանումները, բացատրեց խաղի սովորական ռեժիմի և իր մշակած խաղի տարբերակի նմանությունները, իր մշակած խաղի առավելությունները

				խաղի մյուս տարբերակներից: ԻԿՄ 3-րդ կուրսի ուսանող Հակոբ Գյոգչյանը ներկայացրեց, թե ինչ է սոցիալական մեդիայի մարքեթինգը (SMM): Խոսեց SMM–ի նպատակի, խնդիրների մասին: Ներկայացրեց՝ ով է SMM մասնագետը և ինչ գործունեություն է ծավալում: Նա ընդգծեց նաև այն կարևոր հատկանիշները և կանոնները, որոնք պետք է դրսևորի և կիրառի մասնագետը: Սեմինար-զեկուցմանը մասնակցեցին 17 ուսանողներ:

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ՝ Մ. Ասիլյան

քարտուղար՝ Ա. Խաչատրյան